

90 Dr. A. Mouradian  
1290 N.W. 36th St.  
Miami, Florida

Փետրուար 25, 1948

Սեծայարգ  
Տիրոջ Ս. Տէր Սահակեան  
Սայամի, Տլորիտա

Սիրելի Պր. Տէր Սահակեան,

Որտեղ եղանք շատ ուր անցեալ շաբթու ընթացքին, Փետրուար 17 - 20, Սայամիի Հայ Ժողովրդեան տուած մեր հովուական այցելութեան ընթացքին, եկեղեցասիրական եւ ազգասիրական զգացումներով տագորուած մեր ժողովուրդը ընդառաջեց եւ փափաք յայտնեց ստեղծել եկեղեցական կազմակերպութիւն մը, իբրեւ մարդ Ամերիկայի մեր Հայց. եկեղեցւոյ Ղեկավար, ու նաեւ ձեռնարկել Սայամիի մէջ Հայ եկեղեցւոյ շէնք մը կառուցանելու գործին:

Ըստ այսմ Փետրուար 17-ին, Երեջշաբթի երեկոյ մեր նախագահութեամբ գումարուած եւ Սայամիի մէջ մնալուն ընկերութիւն հաստատած ազգայիններէ բաղկացեալ ժողովի մը մէջ, որուն ներկայ էին նաեւ իբրեւ ուկնդիր շատ մը այցելուներ, ընդհանուր ցանկութեան ընդառաջ երթալով նշանակեցինք եւ ներկայիս կը հաստատենք ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԿԱՌԱՄԱՐ մը, որուն անդամներն են հետեւեալ անձնաւորութիւնները.-

- |                   |                |                 |
|-------------------|----------------|-----------------|
| Տեարք՝ Սէմ Մամեան | Հէրրի Չազարեան | Տօթթ. Լուսինեան |
| Օննիկ Քիւրճեանեան | Վահէ Պալբզեան  | Գ. Գրիգորեան    |
| Ս. Տէր Սահակեան   | Տիգրան Խոյեան  | Արամ Զարբզեան   |
| եւ Տօթթ. Տալման   |                |                 |

Նշանակեալներուն մէջ իբրեւ երիցագոյնը կը յանձնարարենք Ձեզ որ յիշեալ անձնաւորութիւնները ժողովի կանչէք առաջին առթիւ որպէս զի Յանձնախումբը իր կողմէ կազմէ իր դիւանը եւ մեզի տեղեկացնէ ընտրեալներուն անունները:

Իր դիւանին ընտրութենէն ետք՝ եկեղեցական Յանձնախումբի գլխաւոր գործերը պիտի ըլլան հետեւեալները.-

1- Փետրուար 17-ի ընդհանուր ժողովին արձանագրութեան համաձայն՝ Հետապնդել եկեղեցւոյ շինութեան գործը Առ այս անհրաժեշտ է նախ՝ որ Յանձնախումբը ԻՆՅՈՐԱՌՈՐԷՅԹ ըլլալ, կառավարութեան մօտ, իբրեւ ԱՐՄԻՆԻՇԸՆ ՕՐՈՂՆՏՈՂՍ ԱՐՈՄԻՈ-ԼԻԳ ՉԸՐԶ ԻՆ ՍԱՅԱՄԻ, որպէսզի կարենայ կալուած եւ դրամ ունենալ իր անունին, եւ եկեղեցւոյ նաւորուած գումարները տրագերծ լինին: Ապա՝ Յանձնախումբը պէտք է Պր. ՊԸՐԹԻ խօստացած հողի ընտրութիւնը կատարէ եւ իր անունին անցնէ:

Յետոյ պէտք է հետամուտ ըլլայ եկեղեցւոյ յատկագծի պատրաստութեան գործին, գոր կատարել խոստացաւ Պր. Պալըզեան: Յանձնախումբը պէտք է հետապնդէ եւ ստանայ նաեւ խոստացուած գումարները եւ պատշաճ ժամանակին ապահովէ նաեւ եկեղեցւոյ զանազան մասերուն շինութեանց մասին եղած խոստումներուն գործադրութիւնը: Եկեղեցւոյ շինութեան ծանր գործը կանոնաւոր կերպով յառաջ տանելու համար՝ անշուշտ Յանձնախումբը պէտք պիտի ունենայ զանազան Ենթա-Յանձնախումբերու, զորս կրնայ նշանակել իր մէջէն կամ առհասարակ ժողովուրդին մէջէն՝ անխտիր, ձեռնահաս անձեր գործաթցութեան հրահրելով: Եկեղեցւոյ շինքի յատկագրի մեր հաւանութեան ենթարկել է ետք միայն պէտք է գործադրուի:

2- Յանձնախումբի երկրորդ գործը պիտի ըլլայ՝ համայնք մը կազմելու համար կանոնաւոր անդամներ արձանագրել, իւրաքանչիւր արձանագրուող անդամէ խոստում առնելով տարեկան որոշ տուրք մը՝ եկեղեցական գործերը յառաջ տանելու համար: Այս կերպ անդամներու արձանագրութենէն յետոյ, երբ կանոնաւոր ծիսկան կամ անդամական ժողով կազմուի՝ այն ատեն համայնքը իր կանոնաւոր կերպով ընտրուած հոգաբարձութիւնը կ'ուսնենայ յառաջիկային:

3- Եկեղեցական Յանձնախումբին երրորդ գործը պիտի ըլլայ՝ իր առժամեայ Հոգաբարձութեան համգամանքով՝ գէթ տարին անգամ մը, մեր կարգադրութեամբ Սայամի զրկուած այցելու հոգեւորականին հիւրասիրութիւնը կատարել եւ եկեղեցական պաշտամունքի գործը կազմակերպել:

4- Յանձնախումբը պէտք է նաեւ շանայ, ի պատշաճ ժամանակի, կազմել Եկեղեցասիրաց Միութիւն մը, որաց զաս մը, Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց կազմակերպութեան Մասնահիւղ մը ելն: Միաժամանակ համայնքի մէջ գոյութիւն ունեցող ուրիշ կազմակերպութեանց / Բարձրագիւնի ու Ակումբ, Բարեգործականի Մասնահիւղ ելն. / հետ սիրալիբ եւ անխտրական գործակցութեամբ՝ Յանձնախումբը պէտք է շանայ գործի մշակութային եւ ընկերական զանազան հաւաքոյթներ ազգային ոգին համայնքի մէջ վառ պահելու համար:

Այս բոլորը ժամանակ, կորով, անձուիրութիւն եւ փափկանկատութիւն պահանջող գործեր են, որոնք վստահ ենք թէ Սայամի մեր պատուական ժողովուրդը ընդհանրապէս եւ Եկեղեցական Յանձնախումբը մասնաւորապէս ազնիւ ոգիով յառաջ պիտի տանին:

Ուստի՝ կ'ազօթենք Յանձնախումբիդ յաջողութեան համար, կ'օրհնենք սրբազան գործը, որուն կր նուիրուի ան եւ վստահ ենք որ համերաշխ եւ սիրալիբ ոգեով պիտի գործէ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի աստուածային առջնորդութեամբ:

Մնամք հայրական շնորմ սիրով  
Զերդ

Առջնորդ Հայոց Ամերիկայի

Գ. Գ. Ներսիս Գեորգի 17-ի ժողովի  
Առնագրութիւնը:

*Miami*

Օգոստոս 27, 1954

Մեծայարգ  
Տոգթ. Մ. Մ. Տուլման  
Ատենադպիր Միսկան Խորհուրդի  
Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյն  
Մայամի

Սիրելի Տոգթ. Տուլման,

Ս. Էջմիածնէն մեր վերադարձին վերահասու եղանք  
Եկեղեցւոյդ կից երկու շէնքերու գնման մասին Ձեր առաջարկին:

Կը ցաւինք որ Ամերիկայէն հարկադրաբար մեր  
բացակայութիւնը եւ մեր վերադարձին ժողով գումարելու զբո-  
ւարութիւնը, կարելի չղարձուցին ատենին պատասխանելու Ձեր  
առաջարկին:

Թէեւ նման խնդիրներու պարագային անհրաժեշտ է  
որ Թեմական Խորհուրդը տայ հարկ եղան որոշումը, սակայն  
նկատելով որ Թեմական Խորհուրդը իր յաջորդ նիստը պիտի գու-  
մարէ Սեպտ. 8-ին, մենք անձամբ քննեցինք վերոյիշեալ շէնքերու  
կապակցութեամբ Ձեր Եիսկան Խորհուրդին տեղեկագիրը եւ զանոնք  
զտպէս գահացուցիչ կանոնադրութեան համաձայն: Եւ որպէս զի  
առաւել եւս ուշացուցած չլլանք Առաջնորդարանի որոշումը,  
այսու կ'արտօնենք Միսկան Խորհուրդը որ հարկ եղանք ընէ,  
լաւագոյն եղանակաւ եւ պայմաններով, յիշեալ շէնքերը Եկեղեց-  
ւոյդ համար գնելու մասին:

Մենք մեր այս որոշումը կը հաղորդենք Թեմական  
Խորհուրդի յառաջիկայ նիստին: Մինչ այդ կը յանձնարարենք  
Ձեզ հետապնդել Ձեր առաջադրութիւնը եւ արդիւնքը տեղեկագրել  
մեզի:

Մազթելով Ձեզ յաջողութիւն եւ գնահատելով Ձեր  
Եկեղեցւանուէք գործունէութիւնը,  
Մամբ հայրական սիրոյ շնորհող զուովնի  
եւ օրհնութեամբ

ՄԱՄԱՐԻ ԱՐՁԵՊԻՍԿՈՍ  
Տեղապահ Առաջնորդութեան  
Հայոց Ամերիկայի

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ, ՄԱՅԱՄԻԻ



ST. JOHN THE BAPTIST  
ARMENIAN CHURCH OF MIAMI

Church Address  
1501 N. E. 1st AVENUE  
MIAMI, FLORIDA

*Արարչություն  
Հունիս 7, 1954-ին  
Վ.Վ. Բարսեղյան*

Հոգեշնորհ

Տ. Եղիշէ Վոդ. Սիմոնեան  
Առաջնորդական Տեղապահ

Սիրելի Հայր Սուրբ

Ի պատասխան Ձեր Յունիս 25 թուակիր նամակին, այսու կրկնափաթինք  
կոփին բացատրել կարգ մը հարցեր որոնց մեր ատենադպիրը արդէն լիուլի  
պատասխանած էր:

1. Մեր քուէատու անդամներուն թիւը է 52.
2. Անդամական ժողովին ներկայ էին 32 անձինք, եւ միահամուռ վա  
ւերացուցին Միակն խորհուրդի ծրագիրը.
3. Մենք անշուշտ սակարկութիւն պիտի ընենք, հողատերերը 10500 Տո  
լար կողահանք են իւրաքանչիւրին, սակայն մենք պիտի աշխատինք  
անկէ յատ պակաս գումարով գնել:
4. Գետնին վրայ երկու հին տուներ կան, որոնք առժամեայ կրնանք  
գստածել իբր Կիրակնօրեայ դպրոցի սրահ, եւ երիցատուն:
5. Մենք այս նպատակին յատկացուած 3000 տոլար ունինք, եւ լիայոյս  
ենք զայն կրկնաատկելու հանգանակութեամբ եւ այլ մեր տեղական  
միջոցներով: Կոյուսանք նաեւ ամեն տարի որոշ գումար մը յատկա  
ցնել մեր եկամուտին:

*Տեղապահ  
Վ.Վ. Բարսեղյան*      *Վ.Վ. Բարսեղյան*      *Վ.Վ. Բարսեղյան*

*Հ.Յ. Զարգարյան*      *Վ.Վ. Բարսեղյան*

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ, ՄԱՅԱՄԻԻ



ST. JOHN THE BAPTIST  
ARMENIAN CHURCH OF MIAMI

Church Address  
1501 N. E. 1st AVENUE  
MIAMI, FLORIDA

*Արարչական  
Հանձնաժողով 1954-ի  
Կաթող*

Հոգեշնորհ

Տ. Եղիշէ Վոդ. Սիմոնեան  
Առաջնորդական Տեղապահ

Սիրելի Հայր Սուրբ

Ի պատասխան Ձեր Յունիս 25 թուակիր նամակին, այսու կրփափաքինք  
կողին բացատրել կառգ մր հարցեր որոնց մեր ատենադպիրը արդէն լինուի  
պատասխանած էր:

1. Մեր քուէատու անդամներուն թիւը է 52.
2. Անդամական ժողովին նեոկայ էին 32 անձինք, եւ միահամուռ վա  
ւեոացուցին Մսական Խորհուրդի ծրագիրը.
3. Մենք անշուշտ սակարկութիւն պիտի ընենք, հողատերերը 10 500 Տո  
լար կոպահանջեն իւոաքանջիւրին, սակայն մենք պիտի աշխատինք  
անկէ յատ պակաս գումարով գնել:
4. Գետնին վոայ եոկու հին տուներ կան, որոնք առժամեայ կրնանք  
գսրծածել իբր ԿիրակնՕոեայ դպրոցի սրահ, եւ երիցատուն:
5. Մենք աւս նպատակին յատկացուած 3000 տոլար ունինք, եւ լիայոյս  
ենք զայն կոկնաատկելու հանգանակութեամբ եւ այլ մեր տեղական  
միջոցներով: Կոյուսանք նաեւ ամեն տարի որոշ գումար մը յատկա  
ցնել մեր եկամուտին:

*Տարբարագրուեալ  
Եր. Կարապետեան  
Յ. Զարգարեան  
Ս. Ս. Սարգսեան*

*Miami*

Յուլիս 25, 1954

Մեծայարգ  
Տոքթ. Մ.Ս. Տալման  
Ատենադպիր Միսկան Խորհուրդի  
Ս. Յովհաննէս Եկեղեցւոյն  
Մայամի

Սիրելի Տոքթոր Տալման,

Զեր Մայիս 27 եւ Յուլիս 12 թուակիրները՝ Եկեղեցւոյ կից ներկու շէնքերու գնման մասին՝ նկատի առինք թեմական Խորհուրդին մէջ:

Թեմական Խորհուրդս նկատեց որ Զեր նամակներուն վրայ չէին երեւար Եկեղեցւոյ շէնքերն եւ Միսկան Խորհուրդի ատենապետին անունները: Այսպիսի դիմումները ստորագրուած պէտք է ըլլան նախագահի, ատենապետի եւ ատենադպրի կողմէ:

Թեմական Խորհուրդս միշտ ալ քաջալերած է մեր Եկեղեցւոյ ծախքը, երբ անոնք շինութեան եւ այլ ձեռնարկներու ծրագիրներ ունեցած են: Սակայն Զեր դիմումին մասին վերջնական որոշում տալէ առաջ՝ անհրաժեշտ կը նկատենք որ հանիք հայթայթել հետեւեալ տեղեկութիւնները:—

- 1— Մուխիզ անդամներուն ընդհանուր թիւը.
- 2— Անդամական ժողովիդ ներկայ եղողներու թիւը եւ քուէարկութեան արդիւնքը.
- 3— Գնուելիք հողերուն վերջնական գինը.
- 4— Ի՞նչ նպատակի համար կուզէք գնել յիշեալ հողերը.
- 5— Ի՞նչ միջոցներով պիտի հայթայթէք հողերու գնման համար անհրաժեշտ եղող գումարքը:

Մնամ սիրոյ ողջունիւ

Եղիշէ Վարդապետ  
ՓՈՒԱՆՈՐԴ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ  
ՏԵՂԱԳԱՆԻ

Handwritten Armenian text in the top left corner, including the year 2033 and other characters.



ST. JOHN THE BAPTIST  
ARMENIAN CHURCH OF MIAMI

Church Address  
1501 N. E. 1st AVENUE  
MIAMI, FLORIDA

June 12-54 -  
1614 - Arexel Ave -  
Miami Beach, Fla -

Handwritten name: M. Umestane.

Handwritten notes describing items: 2 Boniface envelopes, 2 blue envelopes 90x60, 6 envelopes etc.

Handwritten notes mentioning a sum of \$105.00 and other details.

Handwritten notes mentioning the number 57 and other details.

Handwritten notes mentioning the number 32 and other details.

St. W. W. ...  
Handwritten signature and name at the bottom of the page.

Miami

2 Յուլիս 1954

Մեծայարգ  
Տոքթ. Մ. Մ. Տոլման  
Աանապետ Միական Խորհուրդի  
Ս. Տոլկանու: Մկրտիչ Եկեղեցւոյն  
Մայամի, Ֆլորիսա

Յարգելի Տոքթ. Տոլման,

Ասացած ենք Ձեր Մայիս 27 թուակերթ՝ որով կը հա-  
ղորդէիք թէ որոշած էք Ձեր Եկեղեցւոյն կից եղևու Հողերը գնելու  
աշխատանքին ձեռնարկել եւ կը փափաքէիք Առաջնորդարանի արտօնու-  
թիւնը ստանալ:

Առաջնորդական Տեղապահի Փոխանորդ՝ Հոգեշնորհ Տ. Ե-  
զիշէ վրդ. Սիմոնեանի յանձնարարութեամբ, այսու կը տեղեկացնենք  
Ձեզ թէ այս Հարցը պիտի հանուի Թեմական Խորհուրդի Յուլիս 24-ի  
ժողովին: Նախ քան այդ սակայն, անհրաժեշտ է որ մեզ տեղեկացնէք  
անդամական ժողովիդ մասին: Կարեւոր է գիտնալ թէ քանի՛ Հոգի ներ-  
կայ եղած է ժողովին, եւ քուէներու թիւը: Նայալէս պէտք է տեղե-  
կութիւններ ունենալ գնուելիք Հողերու մասին: Ինչպէս դիմք, մա-  
րածութիւնը, եւ այլն:

Այս տեղեկութիւնները անհրաժեշտ են որպէս զի անոնք  
հիման վրայ Թեմական Խորհուրդը կարենայ իր որոշումը տալ այդ մա-  
սին:

Մնամ Ձերդ Յարգանքը՝

Աւետիս Սանճեան  
Դիւանագիր Առաջնորդարան



Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ, ՄԱՅԱՄԻԻ



ST. JOHN THE BAPTIST  
ARMENIAN CHURCH OF MIAMI

Church Address  
1501 N. E. 1st AVENUE  
MIAMI, FLORIDA

May 27-54

Ամբիջ Պ. Առեմիսյան -

Բարձրագույն խնամքով և սիրով անցնում եմ  
Ձեր համար՝ որովհետև անցյալ տարի  
հոկտեմբերի 2-ին Ձեր համար արձակուրդի  
թղթեր էի արձակում և Ձեր համար անցնում  
էի Ձեր համար և Ձեր համար անցնում էի  
անցյալ տարի Ձեր համար անցնում էի  
և Ձեր համար անցնում էի և Ձեր համար  
անցնում էի և Ձեր համար անցնում էի

Ընդհանուր դրոշմի և այլ տեսակի և դրոշմի  
և այլ տեսակի և այլ տեսակի և այլ տեսակի  
և այլ տեսակի և այլ տեսակի և այլ տեսակի  
և այլ տեսակի և այլ տեսակի և այլ տեսակի

1614 - Buxton Ave -  
Miami Beach - Fla  
Dr. M. M. Delavane -

(Dr) W. W. ...  
...

իմ անունով  
հարկ է դրոշմ  
և այլ տեսակի

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ  
ՀԱՅՑԻ ԵԿԵՂԵՑԻ, ՄԱՅԱՄԻԻ



ST. JOHN THE BAPTIST  
ARMENIAN CHURCH OF MIAMI

Church Address  
1501 N. E. 1st AVENUE  
MIAMI, FLORIDA

Գերապատիւ  
Տ. Տ. Մամբրէ Առք, Գալօսայան  
Առաջնորդ Ամերիկայի Հայոց  
Նիւ յորք.

Մայիս 7 1956

Սրբազան Հայր

Առ ի գիտութիւն Ձեր Սրբազնութեան եւ Առաջնորդարանին կը տեղեկացունենք որ, Մաղկազարդի Կիրակին Մարտ 25, Գաղութիս սիրուած եւ յարգուած-Ազգայիններէն, Նախկին Հոգաբարձու եւ մեր Եկեղեցւոյ հիմնադիրներէն Պր. Սիսակ Մուսճիեան յանկարծամահ եղաւ խոր սուգի մէջ թողելով համայն Գաղութը:

Յուզարկաւորութեան տխուր արարողութիւնը կատարուէցաւ յաջորդող Ձորեգշարթին խուռն բազմութեան մը ներկայութեան եւ փոխան ծաղիկի-791 ՏՕլար Նուիրատուութիւն եղաւ, որ իր իկնոջ եւ ընտանիքին կողմէ Հայց, Առք, Եկեղեցւոյ յատկացուեցաւ:

Հանգուցեալին Տիկինը Այրի Տիկ, Մարկրիտ Մուսճիեան, որ իր Ամուսնոյն նման Եկեղեցասէր եւ մեր Եկեղեցասէր Տիկնանց Միութեան ժրջան Ատենապատուհին է, Հոգաբարձութեանս ուղեալ նամակաւ մը կը խնդրէ մեզմէ որ, իր ամուսնոյն յիշատակը վառ պահելու համար հետեւեալ երկու խնդրանքները նկատի ունենանք:

Ա-Ամէն տարի, մինչեւ իր մահը, Մաղկազարդի Կիրակին Հոգեհանգստեան Պաշտամունք կատարուի, թէ իր Հանգուցեալ ամուսնոյն հոգւոյն եւ թէ 1951-ին նոյնպէս Մաղկազարդի Կիրակին յանկարծամահ եղեղ Տաքրին-Պր, Գարեգին Մուսճիեանի յիշատակին: Այս առթիւ կը խոստանայ այդ Կիրակի Օրուան Սեղանին ծաղիկները ինք հայթայթել:

Բ-Եկեղեցւոյ-ԱԶ-Խորանը իր Ամուսնոյն անուան յատկացունել եւ Հանգուցեալին անունը գրել վրան, ինչպէս որ 1951-ին երբ իր Տաքրը կը մեռնի այն ատենուան Հոգաձուութիւնը դեռ Խորանները չչինուած-ՁԱԽ-Խորանն ալ անոր յատկացուցած է եղեր:

Թէեւ այս մասին արձանագրութեանց մէջ յիշատակութիւն չիկայ բայց ըստ վկաներու այդպիսի խոստում մը կատարուած է բայց մինչեւ հիմա գործադրուած չէ:

Հոգաբարձութիւնս իր Ապրիլ 26-ի ժողովին մէջ նկատի ունենալով վերոյիշեալ երկու խնդրանքները, Համամիտ գտնուեցաւ առաջինին, պայմանաւ որ ամէն տարի նախապէս Հոգաբարձութեանց իմաց տրուի եւ անոնց կարգադրութեամբ Պաշտամունքը կատարուի:

Բայց երկրորդ խնդրանքին մասին նկատի ունենալով որ այդ մասին որոշում տալը մեր իրաւասութեան մէջ չէ, Եկեղեցական հարց մը ըլլալով, միաձայնութեամբ որոշեցինք Ձեր Սրբազնութեան դիմել եւ Ձեր կարծիքը եւ հրահանգը առնելէ վերջ որոշում կայացունել:

Յիշեալ երկու Խորանները Եկեղեցւոյ կողմէ կառուցուած են, վրայի պատկերները եւ աշտանակները Նուիրութեամբ են տարբեր Ազգայիններէ, արդեօք կարելի է որ Խորանը յատկացուի ուրիշ մը յիշատակին: Բարի եղեք այս մասին Ձեր հրահանգը տեղեկացնել:

Մեր Եկեղեցւոյ-էպրսթրէքը-Առաջնորդարան կը գտնուի եւ մենք կարճ ժամանակի մը համար անոր պէտքութիւն ունինք: Եկեղեցւոյ Խորանին ետեւի հողամասին շուրջ դրացիին հետ պզտիկ անհամաձայնութիւն մը ունենք եւ մեյր Բաստաբան Պր, Յիմի Բիլաֆեանը կուզէ որ, Եկեղեցւոյ-էպրսթրէքը-ի մօտ ունենայ: Ուստի բարի եղեք անիկայ ալ ղրկելու մեր գործը կատարելէ յետոյ իսկոյն ետ ղրկենք:

Որդիական Յարգանքներով  
Ի դիմաց Հայց, Առք, Եկեղեցւոյ Հոգաբարձութեան  
Լեւոն Գուլուսճիեան, Բարտուղար  
L. L. Gulustanian

ԹԻ. 788  
Մայիս 21, 1956

Հոգեշնորհ  
Տ. Վահրամ Ս. Վրզ. Կազարեթեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ  
Մայամբ.

Սիրելի Հայր Վահրամ,

Միակամ խորհուրդիդ ամենապատիւ Գրն. Էնոն Գալայեան խափ-  
կաւ մը կը Հաղորդէր մահուան գուժը եկեղեցւոյդ Հիմնադիրներն ողբա-  
նալ Սիսակ Մովսէսնիս Խորապետ կը վշտացնէր Ձեր Համայնքի կրած կրած  
սուգինս Մովսէսնի մահով եկեղեցիդ կը կարծեսնէ արժանաւոր անդամ մը եւ  
ծուխդ ալ պատուական ազգային մըս կը խնդրենք որ բարի ըլլաք այրի Տի-  
կին Մարգարիտ Մովսէսնի յայտնել մեր եւ Թեմական խորհուրդի սրտադին ցա-  
ւակցութիւնները Աղօթող ենք որ Տէրը լուսաւորէ նշնցեալի Հոգին եւ  
երկնային միջնաբաւթիւն պարգեւէ իր սգաւոր պարագաներունս

Իր նոյն գրութեամբ Գրն. Գալայեան փափաք կը յայտնէր որ  
արտօնուէիք եկեղեցւոյդ փոքր խորանը արձանագրել Հանդուցեալ Մովսէսնի  
յիշատակին եւ ամէն Մաղկազարդի կիրակիին կտաքնի Հոգեհանգստեան պաշ-  
տօն անոր Համարս Այսու կը յայտնենք թէ Հոգեհանգիստ կարելի է կտաքնել  
առանց սեւէ արգելքի, ինչպէս նաեւ յիշեալ խորանի առաջամասը սեանդել  
անոր անունը կրող Տեսադեայ փոքրիկ տախտակ մըս Գոյթեք որ նուիրուած  
են զանազան բարեբարքներու եւ պատուական ազգայիններու կողմէ, խորանին  
Հետ ամբողջական կապակցութիւն չունին, քանի որ սովորութիւն է խորանը  
նուիրուած ըլլայ անձէ մը, իսկ գոյթեքը՝ ուրիշներս

Իսկ գալով եկեղեցւոյդ Հոգի ապստոսներէ, կը յայտնենք  
թէ Առաջնորդարանի գրասենեակին մէջ պահուած Համայնքի յառուկ թղթա-  
ծրարին մէջ չգտանք զայն, եւ փաստարան Գրն. Վինսէն Եարտրմ Հուսա-  
անց թէ տարի ու կէս առաջ ալ ուզած է յեղծել այդ թուղթը ու Ձեզի պա-  
տասխանուած է թէ ոչ Գրն. Եարտրմի եւ ոչ ալ Առաջնորդարանի մօտ կը  
գտնուի անիկա թելագրելի է որ ներկայանայ տեղիդ Գաւուռդի Քլըքթի  
գրասենեակը, Հոնկէ ձեռք բերելու Ձեզի պէտք եղած այդ պաշտօնաթուղ-  
թը

Հաղորդելով զայս առ ի գիտութիւն եւ մաղթելով Ձեր գոր-  
ծոց յաջողութիւն.

Մամ սիրոյ ողջունի  
Աղօթակից

ՄԱՄԱՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թ.Գ.- Վստահ ըլլալով որ Ձեր առողջութիւնը լաւ է եւ տեղի  
գործերը կարգին կ'ընթանան, պիտի խնդրէի որ բարի ըլլայիք մեր Մայամբ  
այցելութեան առթիւ "Հայոց Եկեղեցի" Համար յոգուած մը պատրաստէք, ո-  
րուն Համար կը յայտնենք մեր շնորհակալութիւնները

Իող Գրն. Գալայեան մեզ Հաղորդէ իր ծննդային անունները եւ  
ծննդեան վայրն ու թուականը որպէսզի իր Անաղ Մարկուսագութեան վկայականը  
պատրաստելով իրեն գրկենք

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ, ՄԱՅԱՄԻԻ



ST. JOHN THE BAPTIST  
ARMENIAN CHURCH OF MIAMI

Church Address  
1501 N. E. 1st AVENUE  
MIAMI, FLORIDA

Per  
9/1/57

Հունիս 2, 1957

Քրիստոսը  
տ. Մարտի և Քրիստոսի զանազան  
և զանազան լիտիթիանայի թմբի  
ի Երեւոյի Ե. Կ.

Արեւիկա Արեւիկա,

Առաջին խորհուրդի Օճիւնի Հարցում  
զարգացնելով պիտի խորհուրդի յառաջիկայ փոքր  
10, 1957 Նոյեմբեր 20:

Հոգեւորականութիւնը և իրենց պիտի իրենց  
ձեռքով Քրիստոսի զանազան թմբի, որ իրենց խորհուրդի պիտի  
և. իրենց խորհուրդի յառաջիկայ և իրենց իրենց խորհուրդի  
Հոգեւորականութիւնի իրենց իրենց իրենց և իրենց իրենց  
պիտի իրենց իրենց:

Հոգեւորականութիւնը իրենց իրենց իրենց  
իրենց իրենց իրենց:

Իրենց իրենց իրենց և իրենց իրենց  
ի իրենց իրենց և իրենց իրենց իրենց  
Իրենց իրենց և իրենց իրենց  
Իրենց իրենց և իրենց իրենց

Քիւ 1464  
Յունվար 9, 1957

Գերաշնորհ  
Տ. Վահրամ Մ. Վրդ. Նազարէթեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ  
Մայմի.

Սիրելի Հայր Վահրամ,

Գրասենեակէն մեր բացակայութեան պատճառաւ Ձեր եղ-  
բայրութեան ամսոյս 2 թուակիր նամակը այսօր միայն կարգաւու պա-  
տեհութիւնը ունեցանք: Ետ կը ցաւինք որ մեզի համար անկարելի  
պիտի ըլլայ Փետրուար 10ին Ձեր եկեղեցւոյ մէջ պատարագել: Մեր  
Ժամանակացոյցը հարկադրաբար ամիսներ առաջ կը պատրաստենք եւ մին-  
չեւ Մարտ 17ը պէտք է նքղեակուած այցելութեանց ընթացք տանք:

Ուրեմն Մարտ 24ին կամ 31ին հազիւ թէ պիտի կրնանք  
Մայմի ըլլալ: Անշուշտ յետագային լաւ պիտի ըլլար եթէ առաջնոր-  
դական պատարագ ունենալու Ձեր կարգադրութիւնը գոնէ երկու ամիս  
առաջ իմացնէիք մեզի որպէսզի ըստ այմ կարենանք Ձեր փափաքին  
գոհացում տալ:

Մենք ինքնաբերաբար Մարտ 24 արդէն Ձեզի համար նը-  
շանակած ենք: Եթէ այդ թուականը Ձեզի յարմար է, հաճեցէք մեզ  
տեղեակ պահել:

Ս. Մանդեան եւ Ամանորի տօներուն առթիւ հաճեցէք  
ընդունիլ մեր սրտագին շնորհակտութիւններն ու եղբայրական  
ողջոյնները:

Մնամք սիրոյ ողջունիւ  
Աղօթաբար

ՄԱՍՏՐԷ ԱՐՁԵՂԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Հաճեցէք Պրն. Պըրթէն առնել Վեհափառի տուած կոնդակը եւ մեզի  
ղրկել որպէսզի Մայր Աթոռ Վերադարձնենք ստորագրուելու համար:

Թիւ 3433  
Յուլի 18, 1962

Մեծայարգ  
Տիար Դանիէլ Սապահ-Գիւլեան  
Ատենապետ Միսկան Խորհուրդի  
Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Մայմի:

Սիրելի Պրն. Սապահ-Գիւլեան,

Նկատի ունենալով Ձեր համայնքի անովի կացութիւնը, եւ  
մասնաւորաբար ձեռնարկած այս շրջանին, մնայուն եկեղեցական մը ու-  
նենալու Ձեր խնդրանքը, ուրախ ենք Ձեզի հաղորդելու թէ Ձեր Եու-  
լիս համար հոգեւոր հովիւ նշանակած ենք Արժանաշնորհ Տ. Լեւոն  
Զհնյ. Առաքելեան, որ իր նոր պաշտօնը պիտի ստանձնէ Փետրուարի  
վերջերը:

Վստահ ենք թէ Արժանաշնորհ Տ. Լեւոն Թահանայ Առաքելեան,  
որ մեր թեմի պատրաստութեամբ, զարգացած եւ գործունեայ հոգեւորական-  
ներէն մին է, Ձեր գործակցութեամբ պիտի կարենայ յաջողութեամբ  
պսակել Ձեր շինարարական ծրագիրները՝ կազմակերպելով եւ զօրացնելով  
տեղւոյդ Հայաստանեայց Եկեղեցւոյ համայնքը:

Մաղթելով Ձեզի Աստուծոյ օրհնութիւնները եւ յաջողութիւն  
Ձեր գործերուն մէջ:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
եւ օրհնութեամբ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 3432  
Յունուար 18, 1962

Հոգեշնորհ  
Տ. Հմայեակ Ս. Վրդ. Ինդոյեան  
Օգնական Հովիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ  
Նիւ Եորթ.

Սիրելի Հայր Հմայեակ.

Շնորհաւ յարգելով Թրոյի Ս. Փետրոս Եկեղեցւոյ Պատուարժան  
Միական Խորհուրդի խնդրանքին, այսու զմեզ կը նշանակենք Հոգեւոր  
Հովիւ Թրոյի մեր համայնքին:

Դուք քաջամեծք էք Թրոյի ծուխին եւ անոր Հոգեւոր ու Ժա-  
կան կարիքներուն: Վտահ ենք թէ մեր կանոնաւոր եւ Երազրեալ աշխա-  
տանքով պիտի շանթաբ զօրացնել մեր այդ համայնքի, Հոգ տանելով մաս-  
նաւորաբար նոր սերունդի կրօնական եւ ազգային դաստիարակութեան:

Ինչպէս Հաղորդած ենք Թրոյի Պատուարժան Միական Խորհուրդին,  
Ձեր նոր պաշտօնը պիտի ստանձնէք Փետրուարի երրորդ շաբթու ընթացքին:

Մաղթելով Ձեզի Աստուծոյ օգնականութիւնը եւ յաջողութիւն Ձեր  
եկեղեցանուէր աշխատանքներուն մէջ.

Մեծաք Տիրուանդ սիրոյ ողջունիւ  
Ազօթաբար

ՍԻՈՆ ԱՐԵՇԳԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 3428  
Յունուար 18, 1962

Արժանաշնորհ  
Տ. Լեւոն ԲՀՆՅ. Առաքելեան  
Հոգեւոր Հովիւ Ս.Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ  
Ուեսդ Ֆիլատելիիս.

Սիրելի Տէր Լեւոն,

Ընդունած ենք Ձեր Դեկտեմբեր 25, 1961, թուակիր նամակը, որով  
կը ներկայացնէք Ձեր հրատարականը Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ  
հովուական պաշտօնէն, եւ կը խնդրէք որ զՁեզ ազատ կացուցանենք:

Ինչպէս Հայկական Մուսուլման Կոնգրէսը, Ձեր համայնքին տուած մեր  
այցելութեան ընթացքին, խօսեցանք Ձեզի հետ, ընդառաջ երթալով Ձեր  
խնդրանքին, կ'ընդունինք Ձեր հրատարականը Ուեսդ Ֆիլատելիոյ Ս.Սա-  
հակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ հովուական պաշտօնէն, եւ նկատի ունենա-  
լով Մայամիի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ համայնքի անհովիւ վիճա-  
կը, զՁեզ պաշտօնապէս կը նշանակենք Մայամիի մեր ծուխին իբրեւ Հոգեւոր  
Հովիւ:

Արդէն տեղեակ էք որ Մայամիի համայնքը կազմակերպութեան պէտք  
ունի, եւ կարիք ունի նաեւ նոր սրահի մը շինութեան: Կը թելադրենք որ  
ջանք թափէք կառուցանելու ծրագրուած սրահը, որպէս զի համայնքը ունե-  
նայ հաւատոյթներու ու ձեռնարկներու համար կենդրոն մը:

Կը խորհինք թէ մինչեւ փետրուարի վերջերը պիտի կարողանաք  
կարգադրութիւն ընել, ստանձնելու համար Ձեր նոր պաշտօնը:

Կը փափաքինք Ձեզի հաղորդել թէ Ուեսդ Ֆիլատելիոյ համայն-  
քին իբրեւ Հոգեւոր Հովիւ նշանակած ենք Արժանաշնորհ Տ. Կարդան ԲՀՆՅ.  
Տ. Աստուերեան, որ իր նոր պաշտօնը պիտի ձեռնարկէ փետրուարի երրորդ  
շաբաթը:

Կը թելադրենք որ Ձեր մեկնումէն առաջ, Տէր Վարդան Զահանեան  
ներկայացնէք համայնքի Միակն խորհուրդին եւ բարեպաշտ ժողովուրդին:

Մաղթելով Ձեզի Աստուծոյ օգնականութիւնը եւ յաջողութիւն  
Ձեր նոր պաշտօնին մէջ:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍՈՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի



Թիւ 3429  
Յունուար 28, 1962

Մեծայարգ  
Տիար Ժիրայր Եսայեան  
Ատենապետ Միսկան Խորհուրդի  
Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ  
Ուեսդ Ֆիլատելիա.

Սիրելի Պրն. Եսայեան,

Նկատի ունենալով Ձեր հոգեւոր հովիւ Արժանաշնորհ Տ. Լեւոն  
Բհնյ. Առաքելեանի քանիցս բերանացի եւ գրաւոր մեզի ըրած խնդրանքները,  
ընդունած ենք իր Դեկտեմբեր 25, 1961 թուակիր հրատարականը՝ Ձեր հա-  
մարմնի հոգեւոր հովիւի պաշտօնէն:

Այսու Ձեր սիրելիութեան կը հաղորդենք, թէ ժամանակաւոր հանգ-  
մանքով, Ձեր ծուխին հոգեւոր հովիւ նշանակած ենք Արժանաշնորհ Տ. Վար-  
դան Բհնյ. Ասատուրեան, որ իր նոր պաշտօնը պիտի ստանձնէ Փետրուարի  
երրորդ շաբթու ընթացքին: Տէր Լեւոն Զահանայի մեկնումէն առաջ:

Արժանաշնորհ Տ. Վարդան Բհնյ. Ասատուրեան, Թրոյի Ս. Պետրոս  
Եկեղեցւոյ մեր համայնքի հոգեւոր հովիւը, դաստիարակուած, լուրջ եւ  
պարտաճանաչ եկեղեցական մըն է, որ աւելի քան հինգ տարիէ ի վեր հա-  
ւատարմօրէն եւ օգտակար ծառայութիւն մատուցած է Թրոյի մեր բարեպաշտ  
ժողովուրդին:

Վստահ ենք թէ Պատուարժան Միսկան Խորհուրդը եւ Եկեղեցւոյ  
բոլոր յարակից մարմինները զօրավիգ եւ գործակից պիտի ըլլան Ձեր նոր  
հովիւին, որպէս զի միասնաբար եւ փութով ի գլուխ հանէք Ձեր նոր եկե-  
ղեցւոյ շինութեան ու վերանորոգութեան յոյժ կարեւոր գործը:

Մաղթելով Ձեզի յաջողութիւն Ձեր աստուածահաճոյ ծառայութեանց  
մէջ.

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
եւ օրհնութեամբ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 0020  
Սեպտեմբեր 5, 1963

Մեծայարգ  
Տիար Կոստով Գաբրիէլեան  
Ստե՛նապետ Պատուարժան Միական Խորհուրդի  
Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Մայամի.

Սիրելի Պրն. Գաբրիէլեան,

Ինչպէս տեղեակ էք, Ձեր համայնքի հոգեւոր հովիւ Արժանաշնորհ  
Տ. Լեւոն Զհնյ. Առաքելեան, Յգոստոս 27 թուակիր նամակով մեզի ներկա-  
յացուցած է իր հրաժարականը Մայամիի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
հովուական պաշտօնէն:

Այսու, կը հաղորդենք Ձեզի թէ նկատի ունենալով Մայր Տաճարի  
եւ Մշակութային Կեդրոնի յոյժ կարեւոր ծրագիրը, որուն իրագործման  
համար Առաջնորդարանի սկսած է մէկ միլիոն տոլարի հանգանակութեան,  
Արժ. Տ. Լեւոն Զհնյ. Առաքելեանը նշանակած ենք Վարիչ-Բարտուղար Մայր  
Տաճարի գործադիր Թանձնաժողովին:

Տէր Լեւոն իր նոր պաշտօնին պիտի ձեռնարկէ Հոկտեմբեր 7ին, երբ  
փոխադրուի Նիւ Եորք:

Նկատի ունենալով Մայամիի մեր համայնքի աճող թիւը եւ մնայուն  
հովիւի մը անհրաժեշտութիւնը, այսու Ձեզի կը հաղորդենք թէ Ձեր հա-  
մայնքին հոգեւոր հովիւ կը նշանակենք Հոգեշնորհ Տ. Իսահակ Մ. Կրդ.  
Ղազարեան, որ վերջերս Ամերիկա վերադարձած է Պոլիսէն, եւ որ ութը  
տարիներ առաջ մեր թեմին մէջ հովուական պաշտօններ վարած է:

Ձեր նոր հոգեւոր հովիւը իր պաշտօնը պիտի ստանձնէ Հոկտեմբերի  
սկիզբը: Կը յուսանք թէ Պատուարժան Միական Խորհուրդը եւ Եկեղեցւոյ  
ձեռնդակ կազմակերպութիւնները պիտի գործակցին նոր հովիւին, որպէսզի  
անկա կարենայ օգտակարապէս ծառայել Մայամիի մեր սիրելի ժողովուր-  
դին:

Մաղթելով Ձեզի Աստուծոյ օրհնութիւնները եւ յաջողութիւն ձեր  
Եկեղեցանուէր գործերուն մէջ՝

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
եւ օրհնութեամբ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Կանադայի

Թիւ 9019  
Սեպտեմբեր 5, 1963

Արժանաշնորհ  
Տ. Լեւոն Զհնյ. Առաքելեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Մայմի.

Սիրելի Տէր Լեւոն,

Մայր Տաճարի եւ Մշակութային Կեդրոնի Գործադիր Յանձնաժողովը՝  
նկատի առնելով մեր թեմի այս յոյժ կենսական ծրագրի կարեւորութիւնը,  
ինչպէս տեղեակ էք, մեզմէ խնդրած է զՁեզ նշանակել իբրեւ Վարիչ-Քարտու-  
ղար Մայր Տաճարի հանգանակութեան:

Այսու, հաճոյքն ունինք Ձեզի հաղորդելու թէ՛ սիրով սնթացք կու-  
տանք Գործադիր Յանձնաժողովի փափաքին, եւ զՁեզ կը նշանակենք Վարիչ-Քար-  
տուղար Մայր Տաճարի հանգանակութեան:

Ձեր պաշտօնին պիտի ձեռնարկէք Հոկտեմբերի առաջին շաբաթը, Փոխադ-  
րուելով Նիւ Եորք եւ պատրաստելով Ձեր գործունէութեան ծրագիրը, փութով  
սկսելու համար մէկ միլիոն տոլարի հանգանակութեան, որպէսզի կարելի ըլ-  
լայ յառաջիկայ տարուան ընթացքին Մայր Տաճարի եւ Մշակութային Կեդրոնի  
շինութեան գործին ձեռնարկել:

Ձեր տեղ Մայմիի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ հովիւ կը նշա-  
նակենք Հոգեշնորհ Տ. Իսահակ Մ. Վրդ. Ղազարեան, որ Ձեր մեկնումէն առաջ,  
Հոկտեմբերի սկիզբը պիտի ստանձնէ իր պաշտօնը:

Մեծ յոյս ունինք թէ դուք, Ձեր անձուէր, եռանդուն ու գիտակից  
աշխատանքով ու ձեռներէցութեամբ պիտի շանաք իրականացնել այս մեծ ու  
անյետաձգելի ծրագիրը:

Մաղթելով Ձեզի յաջողութիւն Ձեր այս պատասխանատու գործին մէջ՝

Մնամք հայրական սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի

Թիւ 9021  
Սեպտեմբեր 5, 1963

Հոգեշնորհ  
Տ. Իսահակ Մ.Վրդ. Ղազարեան  
Նիւ Եորք.

Սիրելի Հայր Իսահակ,

Ձեր 1963, Յուլիս 16 թուակիր խնդրագիրը՝ մեր թեմին մէջ պաշտօնավարելու համար, ներկայացուցինք թեմական խորհուրդի վերջին նիստին:

Թեմական խորհուրդը, նկատի առնելով Ձեր բացառիկ պարագան, հաւանութիւն տուաւ որպէսզի դուք ծառայէք Ամերիկահայ մեր թեմին մէջ:

Այսու, զԶեզ կը նշանակենք հոգեւոր հովիւ Մայամիի Ա.Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ մեր համայնքին, առժամեայ հանգամանքով:

Մայամիի այժմու հոգեւոր հովիւ՝ Արժանաշնորհ Տ. Լեւոն ԲՏՆյ. Առաքելեան, պաշտօնի կոչուած է իբրեւ Մայր Տաճարի հանգանակութեան վարիչ-Քարտուղար, որ Նիւ Եորք պիտի հաստատուի Հոկտեմբերի առաջին շաբաթը:

Դուք, Ձեր հովուական պաշտօնին պիտի ձեռնարկէք Հոկտեմբերի վեցէն վերջ, սակայն յարմար կը նկատենք որ Տէր Լեւոնի Մայամիէն մեկնումէն առաջ, Հոկտեմբերի սկիզբը, դուք Մայամի փոխադրուիք՝ ծանօթանալու Ծխական խորհուրդին եւ օժանդակ կազմակերպութեանց:

Մայամիի մեր համայնքը վերջին տարիները զգալիօրէն աճած ու կազմակերպուած է: Անցեալ տարի շինուեցաւ նոր եւ նպատակայարմար սրահ մը, որուն վրայ Ծխական խորհուրդը կարելի պարտք մը ունի: Կը յուսանք թէ Ձեր աջալուրձ եւ եռանդուն գործունէութեամբ պիտի ջանաք զօրացնել համայնքը եւ վճարել սրահի պարտքը:

Մաղթելով Զեզի յաջողութիւն՝

Մնամք Տիարաւնդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Քանադայի

Թիւ 2034  
Մայիս 26, 1961

Գերաշնորհ  
Տ. Մամբրէ Արք. Գալթան  
Քաթողիկէ եւ Նախագահ Միական Խորհուրդի  
Ա. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Մայմի.

Արեւիկ Արքեպիսկոպոս.

Ստալա՛ն ե՛նք պատուարժան Միական Խորհուրդի Ապրիլ 24 Բուսկի  
գոյգ նամակները. մի՛ն է մասին եկեղեցւոյ սեփական հողին վրայ սրահի  
մը շինութեան եւ յիշեալ հողին կից կալուածի գնման, իսկ երկրորդ  
մնայուն հովիւ ունենալու մասին:

Թե՛մական Խորհուրդը. Մայիս 19ի իր նիստին մէջ, որոշեց արտո-  
նել ձեր սրահէ շինութիւնը եւ եկեղեցւոյ կից տան գնումը, եթէ ձեր  
նրբական միջոցները կը ներեն:

Սրահի շինութեան գործին մէջ, ձեզի օգնելու համար, պիտի ջա-  
նանք Առաջնորդարանի Մանուկ Հիմնադրամէն 10,000 տուարէ փոխառու-  
ութիւն ապահովել, երբ տարուան ընթացքին վերադարձնելու պայմանով  
փոխառութեան համար պայման է որ ներքաշեալ դիմումագիր անոջին էջին  
վրայ ստորագրած ըլլան Միական Խորհուրդի ատենապետն ու ատենադպիրը, իսկ  
իսկ երկրորդ էջին վրայ ստորագրած ըլլան համայնքէդ հինգ ազգայիններ,  
որոնցմէ երկուքը կրնան ըլլալ ատենապետն ու ատենադպիրը, իւրաքանչիւր  
երաշխատելով՝ երկու հազար տուար:

Իսկ զայնով մնայուն հովիւ ունենալու հարցին, ինչպէս ձեզի յայտնի  
է, ձեր համայնքին պէս աւելի քան 13 ծուխեր ունինք առանց մնայուն հո-  
վիւի, ուստի կը պահինք յայտնելու թէ որիւմ տրամադրելի հովիւ չունինք  
առ այժմ, իրրեւ մնայուն հովիւ ձեզի զրկելու համար:

Այս առթիւ, մեր ուրախութիւնը կը յայտնենք ձեր եղբայրութեան,  
որ անցեալ ձմեռուան շրջանին լիուրի հազեւոր մատակարարութիւն տուիք  
Մայմիի մեր համայնքի բարեպաշտ ժողովուրդին, որուն համար կը յայտնենք  
մեր շնորհակալութիւնը, եւ կը յուսանք թէ ձեր Արքեպիսկոպոսիւնը պիտի հա-  
նի շարունակել ըր հայրական հոգածութիւնը տալ Մայմիի ծուխին հանդէպ,  
ժամանակաւոր կերպով, մինչեւ ցնոր տնօրինութիւն:

Մաղթելով ձեր Արքեպիսկոպոսն եւ պատուարժան Միական Խորհուրդի  
շինարարական ծրագիրներուն կատարեալ յաջողութիւն.

Մտամք իզրայրական շնորմ սիրոյ ողջունիւ  
Աղօթակից

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Պատրիարքայի

Թիւ 2034  
Մայիս 26, 1961

Գերաշնորհ  
Տ. Մամբրէ Արք. Գալժեան  
Քարգոյի եւ Նախագահ Երական Խորհուրդի  
Ա. Յովհաննէս Սկրտիչ Սկեզեցոյ  
Մայմի.

Սրբելի Սրբազան Ազգայն.

Ստացած ենք պատուարժան Երական Խորհուրդիդ Ապրիլ 24 թուակի  
զոյգ նամակները. մին ի մասին եկեղեցոյ սեփական հողին վրայ սրահի  
մը շինութեան եւ յիշեալ հողին կից կալուածի գնման, իսկ երկրորդը  
մնայուն հովի ունենալու մասին:

Թեմական Խորհուրդը, Մայիս 19ի իր նիստին մէջ, որչեզ արտո-  
նել ձեր սրահի շինութիւնը եւ եկեղեցոյ կից տան գնումը, եթէ ձեր  
նրեթական միջոցները կը ներեն:

Սրահի շինութեան գործին մէջ, ձեզի օգնելու համար, պիտի շա-  
նայն Առաջնորդարանի Կառնուր շինարարներն 10,000 տուարի փոխառու-  
ութիւն ապահովել, երես տարուան ընթացքին վերադարձնելու պայմանով:  
Փոխառութեան համար պայման է որ ներկայեալ շինութեան արդիւնքին էջին  
վրայ ստորագրած ըլլան Երական Խորհուրդիդ ատենապետն ու ատենադպիրը, իսկ  
իսկ երկրորդ էջին վրայ ստորագրած ըլլան համայնքէդ հինգ ազգայիններ,  
որոնցմէ երկուքը կրնան ըլլալ ատենապետն ու ատենադպիրը, իւրաքանչիւրը  
երաշխաւորելով՝ կրկու հազար տուար:

Իսկ զալով մնայուն հովի ունենալու հարցին, ինչպէս ձեզի յայտնի  
է, ձեր համայնքին պէս աւելի քան 13 ծուխեր ունինք առանց մնայուն հո-  
վիի, ուստի կը ցաւինք յայտնելու թէ որիւր որամտործիի հովի չունինք  
առ այժմ, իբրեւ մնայուն հովի ձեզի ղրկելու համար:

Այս առթիւ, մեր ուրախութիւնը կը յայտնենք ձեր եղբայրութեան,  
որ անցեալ մեծուան շրջանին լիուրի հոգեւոր մտակարարութիւն տուիք  
Մայմիի մեր համայնքի բարեկարգ ժողովուրդին, որուն համար կը յայտնենք  
մեր շնորհակալութիւնը, եւ կը յուսանք թէ ձեր Սրբազնութիւնը պիտի հա-  
նի շարունակել իր հայրական հոգածութիւնը տալ Մայմիի ծուխին հանդէպ,  
ծամանակաւոր կերպով, մինչեւ ցնոր տնօրինութիւն:

Մաղթելով ձեր Սրբազնութեան եւ պատուարժան Երական Խորհուրդիդ  
շինարարական երազիրներուն կատարեալ յաջողութիւն.

Մամբ Եղբայրական Գերմ Կիրոյ ողջունի  
Աղօթակից

ՍԻՈՆ ԱՐՁԵՊՈՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Թեմերիկայի

Մ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ

Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հովիտ



ST. JOHN THE BAPTIST

Armenian Apostolic Church of Miami

Rector

Church Address

~~St. John the Baptist Church~~

1501 N. E. 1st Avenue

~~St. John the Baptist Church~~

MIAMI, FLORIDA

*Թեմայական օրհանգիստի Կոմիտեի անունով*

Ապրիլ 24, 1961

Գերշ. Տ. Սիոն Ս. Արք. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք.

Սրբազան Հայր.

Միակամ խորհուրդի ամսույս 20-ին բաժանիկ անդամակա՞ն ժողով հրահրեց  
58 տրատու անդամներէն 34ի ներկայութեամբ, հետեւեալ օրակարգով.

1. Յետս կոչել Եկեղեցւոյս սեփական հողի վաճառումը.
2. Որոշում անցնել մշակութային տան շինութեան մեր սեփական հողին վրայ,
3. Գնել, մեր սեփական հողի կից տունը.
4. Ընտրութիւն մեր պատգամաւորին Անձնափոխանորդ.
5. Օրինակացնել շաբաթավճար պահարաններու դրութիւնը. Փլէտձ.

Ուրախ ենք յայտնելու որ օրակարգի բոլոր հարցերը միաձայնութեամբ  
անդամները քուէարկեցին.

Սրահի շինութեան վերաբերմամբ, ժողովը բացարձակ իրաւացութիւն տուաւ  
Միակամ խորհուրդիս յարկը տնօրինելու անմիջապէս շինութեան ձեռնարկելու  
համար.

Իսկ մեր պատգամաւորի անձնափոխանորդ, միաձայնութեամբ ընտրեց  
Փրովիտենսէն Պրն. Զարէհ Եկաւեանը, այդ մասին առանձին նամակով եւս կը  
հաստատենք յիշեալ ընտրութիւնը.

Սրահի շինութեան համար տեղւոյս դրամատունէմը պիտի կատարենք  
փոխառութիւնը, հասկնալի է որ խոշոր գումար մը չենք կրնար ապահովել,  
հետեւաբար՝ շերմապէս պիտի խնդրենք որ Տատուրեան Զընտէն Եկեղեցւոյս  
փոխ տրուէր 10,000 տուար 5 տարիի ընդացքին վճարելի, որուն համար կը  
յայտնենք մեր որդիական շնորհակալութիւնները.

Լիայոյս ենք Ձեր Սրբազնութիւնը եւ թեմական խորհուրդը, ծխական  
ժողովի այս որոշումները պիտի հաստատէ.

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյն Ձեր Սրբազնութեան  
Մնամք խոնարհաբար

Ի դիմաց Մայամիի Ս. Յովհ. Մկրտիչ Հայոց Եկեղեցւոյ  
Միակամ խորհուրդ

Ատենադպիր  
*Արամ Բ. Բաբայան*

Արեւմտեան  
*Պատրիարք Արամ Բ. Բաբայան*

*Եւ հաւատարմութիւն ձեռնարկեմք*

*Արամ Բ. Բաբայան*

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ



ST. JOHN THE BAPTIST

Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Armenian Apostolic Church of Miami

Հովի

Church Address

Rector

~~ՎԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՒՄԱՆ~~

1501 N. E. 1st Avenue

~~Տ. ՔՅՆ ՎԱԿԱՆԱԿԱՆ~~

MIAMI, FLORIDA

*Handwritten signatures and notes in Armenian script.*

Ապրիլ 24, 1961

Գերշ. Ս. Սիրոն Ս. Արք. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,  
Նիւ Եորք

Սրբազան Հայր,

Նախ կուզէի նք յայտնել համայնքիս եւ Միսկան Խորհուրդիս  
որդիական շնորհակալութիւնները որ բարեհաճեցաք մեր խնդրանքին ընթացք  
տալ տրամադրելով ժամանակաւոր հանգամանքով՝ Եկեղեցւոյս դուռները  
բաց պահելու համար Գերշ. Ս. Մամբրէ Ս. Արք. Գալեանեանը. Այս մի  
քանի ամիսներու կարճ ժամանակամիջոցին Նորին Սրբազանութիւնը իր անձով,  
իւր արարողութիւններով եւ քարոզով պայծառացուց մեր եկեղեցին եւ յաւետ  
երախտապարտ պիտի ըլլանք Ձեր Սրբազանութեան.

Բայց Տէր Մամբրէ Սրբազանը իր վերջի Պատարագը կը մատուցանէ  
յառաջիկայ Մայիս 14 Կիրակի օր եւ ապա կը մեկնի, եւ Եկեղեցւոյս  
դռները կրկին կը փակուին.

Սրբազան Հայր, կեդրոնէն հեռու այս ծուխը չէ կարելի թողուլ  
առանց հոգեւոր պաշտօնեայի, հետեւաբար՝ կը խնդրենք որ լուրջորէն  
նկատի առնել մեր վիճակը եւ ըստ կարելոյն շուտով նշանակէք ժամանա  
կաւոր, եթէ չէ կարելի մնայուն հանգամանքով հոգեւորական մը ղրկել.

Միսկան Խորհուրդս վստահ է որ շուտով յարկը կը տնօրինէք  
որուն համար կը յայտնենք մեր շնորհակալութիւնները.

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյն Ձեր Սրբազանութեան  
Մնամք խոնարհաբար

Ի դիմաց Մայամիի Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ  
Միսկան Խորհուրդ

Ատենադպիր  
*Handwritten signature of the secretary.*

Ատենապետ  
*Handwritten signature of the pastor.*



Թիւ 14081  
Օգոստոս 29, 1966

Հոգեշնորհ  
Տ. Իսահակ Մ. Վրդ. Ղազարեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Մայամի.

Սիրելի Հայր Իսահակ,

Իր ժամանակին ստացած ենք Ձեր Յուլիս 8 թուակիր նամակը՝ Ուրախ  
ենք որ կազմած էք Երիտասարդ Տիկնանց Միութիւն մը:

Այս միութիւնը, Երական եկեղեցւոյ մէջ գործող միւս կազմակերպու-  
թեանց նման ենթակայ է Հոգեւոր Հովիւի եւ Երական Խորհուրդի Իջնանու-  
թեան, Հետեւաբար, անոր վերաբերեալ որեւէ որոշում եւ կարգադրութիւն  
կը անօրինուի Հովիւին եւ Երական Խորհուրդին կողմէ:

Մաղթելով Ձեզի եւ նորակազմ Երիտասարդ Տիկնանց Միութեան յաջող-  
ղութիւն.

Մեամբ Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

**Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ**

Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հովիւ

ԳԵՐ. Տ. ԻՍԱՀԱԿ Ծ. ՎՐԻ. ՂԱԶԱՐԵԱՆ

Հեռախոս 371-4484



120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

**ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami**

Rector

Rt. Rev. Issahag Dz. V. Ghazarian

Tel. 371-4484

8 Յուլիս 1966

ԳԵՐ. Տ. ԹՈՐԳՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՅՈՒՆԻՒՅՈՐԴ  
Ի ՆԻՒ ԵՕՐՔ

Սիրելի սրբազան,

Նախ, յանուն Միական Խորհուրդիս, պաշտօնական Մարմիններու ու Համայնքիս, սրտանց կը շնորհակորենք Ձեր Ամերիկահայ Թեմիս Առաջնորդական բարեբաստիկ ընտրութիւնը, լաւագոյն իղձերով:

1962, Հոկտեմբեր 5-ին էր որ մենք ստանձնեցինք Մայամիի Հոգեւոր Հովուութեան Պաշտօնը օրուան Առաջնորդի եւ Թեմական Խորհուրդի հրահանգով: Եւ գիտու-  
թեամբ: Մեր ուսերուն պարտք դրուեցաւ որ ջանանք վճարել տեղւոյս Եկեղեցւոյ սրահի 50 հազար տոլարի պարտքը: Մեր այս աւագ պարտականութիւնը, յաջողեցաւ փառաւոր հանդիսութեամբ Փետրուար 6-ին, 1966, ի ներկայութեան Թուրքիոյ Հայոց Պատրիարքին եւ Տէյթ Թաունթիի Թաղաքապետին ու եկեղեցւոյս Կնքահայրին: Այրեջիւնք սրահի 50 հազար տոլարի պարտամուրհակը, ժողովուրդի ուրախութեան եւ ցնծութեան արցունքներու մէջէն: Տեղեկացուցինք օրուան Առաջնորդին, Մայամիի համար պատմական այս բացառիկ հանդիսութիւնը, եւ տող մը չգրուեցաւ ոչ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ-ի եւ ոչ ալ անոր Անգլերէն ամսաթերթին մէջ:

Միական Խորհուրդս եւ Հոգեւոր Հովիւը կը փափաքի եւ կը խնդրէ Ձերը սրբազանութեանէն որ հաճի հայրաքար թելադրել Պրն. Փիրաննախին թէ մենք դեռ նոր վճարեցինք մեր սրահի պարտամուրհակը եւ արդէն ղրկեցինք ՀԱՅԱՐ ՏՈՒՄԱՐ ի հաշիւ մեր Առաջնորդարանի 10.000 տոլարի պարտքին, եւ հաւատացէք որ կը ջանանք մեր լաւագոյնը ընել ու կամաց կամաց վճարել մնացեալ 9-ը հազար տոլարն ալ:

Կուզենք Ձերը սրբազանութեան տեղեկացնել որ Մայամին կը յառաջդիմէ: Կայ ԻՍԱՀԱԿԵԱՆ Երգչախումբ մը որ ունի իր Հայկական տարազները եւ կու տայ սթանչելի համերգներ եւ իր մասնակցութիւնը կը բերէ ամէն հանդիսութեանց, գրեթէ: Ամէն ՈՒՐԱԿ ԵՐԵՎԱՆ ՍՐԱՀԻՆ դուռները բաց կը մնան մեր ժողովուրդին որոնք կը հաւաքուին նարտիի եւ թղթախաղի անմեղ ժամանցին եւ սուրճի ու կարկանդակի սեղաններուն շուրջ կը մնան ուրախ: Գրեթէ ամէն Կիրակի եկեղեցիէն յետոյ ժողովուրդը կը հրաւիրուի սրահ, Տիկնանց ժրջան միութեան պատրաստած սուրճի ու կարկանդակի սեղանին շուրջ: Ի մի բան, Միական Խորհուրդն ու Տիկնանց Միութիւնը ժրջանօրէն կ'օգնեն եւ իրենց անվարձ ծառայութիւնը կը բերեն Մայամիի Եկեղեցիի յառաջդիմութեան եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ պայծառացման համար: Գաղութը համերաշխ է: Կը մնայ խաղաղ կացութեան մէջ:

Սա վերջին ամիսներուն, գրեթէ տարիի կը մօտենայ որ կարգ մը տիկիւններ կը պնդեն որ անպայման կազմուի ԵՐԻՏԱՅԱՐԴԱՅՑ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒՒԹԻՒՆ ՄԸ եւս մեր Համայնքէն ներս:

Ս. ՅՈՒՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ

Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հովիւ

ԳԵՐ. Տ. ԻՍԱՀԱԿ Ծ. ՎՐԴ. ՂԱԶԱՐԵԱՆ

Հեռախոս 371-4484



120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Rector

Rt. Rev. Issahag Dz. V. Ghazarian

Tel. 371-4484

Միտներ առաջ, տան մը մէջ, հաւաքուած են Ութը տիկիներ, յետոյ ստուգեցինք որ թիւը Վեց է եղեր, ու այս վեց հոգիները ընտրութիւն կատարաւ Սեն ու պաշտօնական նամակով մը խնդրած որ Հովիւը եւ Հոգաբարձութիւնը վաւերացնէ նոր վարչութիւնը որպէս ԵՐԻՏՄԱՍԱՐԴԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԻՆ: Ոչ Հովիւը եւ ոչ ալ Միական Խորհուրդը վաւերացուց այս ապօրէն ընտրութիւնը քայքայ նկատի առաւ գեղեցիկ գաղափարը եւ ընդհանուր Շրջաբերականով Ընդհանուր Ժողովի հրահրեց 300 ընտանիք որոնցմէ միայն Հինգ Տիկիներ կայացաւ սրահ Յուլիս 7, 1966 Հինգշաբթի երեկոյեան ժամը 8-ին:

Բացատրական եւ յունարանական երեկոյթ մը եղաւ եւ արձանագրուեցաւ: Հարց է թէ Պանի տքրեկան պէտք է ըլլան Տիկիները որպէսզի ԵՐԻՏՄԱՍԱՐԴ անականը դառնայ իրաւ: Միական Խորհուրդը որոշած էր 20-50 տարեկան:

Այս Հինգ տիկիները չընդունեցին 20-50 տարեկանը եւ խնդրեցին որ նկատի ունենալով Մայամիի կացութիւնը ուր մեծամասնութիւնը տարիքը առած տիկիներ են, ՏԱՐԻԿԻ ՀԱՐՑ ԶՅԱՐՈՒՑՈՒԻ եւ ոեւէ տարիք ունեցող մը կարենայ ԵՐԻՏՄԱՍԱՐԴԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆՌԱՄՈՒԹԻ ԸԼԼԱԼ:

Երէջ Տիկնանց Միութիւնը միւս կողմէն, կը պնդէ թէ իրենք թէեւ 60- անց են քայքայ Երիտասարդ կը զգան իրենք զիրենք:

Պարտաւոր ենք տեղեկացնել Ձերդ սրբազնութեան անունները այս Հինգ Տիկիներուն: Տիկնայք Եւրէ ֓ Փիլաճեան, Հէլլէն Պօյեանեան, Յէյ Պիմէզեան, Անհիտ Տանըլտ, եւ Անհրլայն Քըլճեան: Միական Խորհուրդի կողմէ Ատենապետ փէջ Յակոբեան, փոխ Գանձապահ Դանիէլ Սապահիւլեան, եւ Փոխ Ատենապետ Ջարլի Յակոբեան, եւ Խորհրդական Սարգիս Յակոբեան:

Կը սպասենք Ձերդ Սրբազնութեան պաշտօնադրին որպէսզի ըստ այդմ գործի ձեռնարկենք եւ կամ հակառակը:

Կը խնդրենք որ յստակօրէն հրահանքէք մեզի ՏԱՐԻԿԻ ՄԱՍԻՆ յատկապէս եւ ժողովի օրինաւորութեան մասին, ընդհանրապէս:


Ձերդ սրբազնութեան հրահանք պաշտօնադրէն ԵՏՔ միայն պիտի կանչենք ուրիշ Շրջաբերականով ժողովի եւ Ձեր հրահանքները պիտի գործադրենք այդ ժողովին եւ կամ յայտնենք ԵՐԶԱԵԵՐԱԿԱՆՈՎ ԲՈՒՆՈՒՄ:

Վերջին խնդրանք մը, երբ պիտի յիշենք Ձերդ սրբազնութեան անունը մեր Ս. Պատարագներուն ընթացքին: Ինչու մեզի եւս հրահանք չի գար Առաջնորդարանէն այս մասին, եթէ ամէնու գացած է նման հրահանք մը:

Մնամք ի համբոյր Սրբազնութեանդ աշոյն

Եղբայրական սիրով եւ որդիական ակնածանօք

Issahag Dz. V. Ghazarian



Քիւ 15338  
Ձեռնարկ 4, 1967

Հոգեշնորհ  
Տ. Խաչակ Ծ. Արդ. Ղազարեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
ու Կաթալակ Միակեան Խորհուրդի  
Մասնիկ:

Արիւնի Հայր Խաչակ,

Չաճէ Զեաւնեան Գոյիսէն կը խնդրէ որ Ամերիկա մուտքի Համար  
Նոր Էմիգրանտի քակուի իրեն թիշան է նաեւ թէ Ձեզմէ նամակ ստացած  
է Ձեր որոշումի մասին՝ զիս իրեն դպրապետ ընդունելու Ս. Յով-  
հաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ:

Կը թելադրենք որ Էմիգրանտի Միակեան Խորհուրդը լեցնէ էւ զի-  
մում կատարէ Գաղթային Գրասենեակ, մտածանշեւով կարեւոր դպրապետի  
մը եւ Հայ դպրոցի ուսուցչի մը, որուն լիովին գոհացում կընայ  
տալ Չաճէ Զեաւնեանի:

Գրած էնք Գրն. Զեաւնեանի որ յաջորդ քայլերուն մասին գուց  
իրեն տեղեակ պիտի պահէ:

Սիրոյ ոգնունիւ

ԹՈՐԳՈՍ ԵՊԻՍԿՈՍՈՍ  
Առաջնորդ

Թիւ 15338  
Յունուար 4, 1967

Հոգեշնորհ  
Տ. Իսահակ Ս. Վրդ. Ղազարեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
եւ Եւրոպայէն Միական Խորհուրդի  
Մայրաժի.

Սիրելի Հայր Իսահակ,

Չաճէ Ձեռանձեան Գուիսէն կը խնդրէ որ Ամերիկա մուտքի Համար  
Նոր Էմիգրէյթի ղրկուի իրեն քիշան է նաեւ թէ Ձեզմէ նամակ ստացած  
է Ձեր որոշումի մասին՝ զինք իրեն դպրապետ ընդունելու Ս. Յով-  
հաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ:

Կը թելադրենք որ Էմիգրէյթի Միական Խորհուրդը լեցնէ եւ ղր-  
մում կատարէ Գաղթային Գրասենեակ, մատնանշելով կարեւոր դպրապետի  
մը եւ Հայ դպրոցի ուսուցչի մը, որուն լիովին գոհացում կընայ  
տալ Չաճէ Ձեռանձեանի

Գրած ենք զրն. Ձեռանձեանի որ յաջորդ քայլերուն մասին գուց  
իրեն տեղեակ պիտի պահէք:

Սիրոյ ողջունք  
ԹՐՐԳՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ

Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հովի

ԳԵՐ. Տ. ԻՍԱՀԱԿ Ծ. ՎՐԴ. ՂԱԶԱՐԻԱՆ

Հեռախոս 371-4484



120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Rector

Rt. Rev. Issahag Dz. V. Ghazarian

Tel. 371-4484

15 նոյեմբեր 1966

Քերականի  
Տ. Թորգոմ Եպիսկոպոս Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եօրք

Սիրելի Սրբազան,

Մայամիի մեր եկեղեցին ԴՊՐԱՊԵՏԻ պէտք ունի, անհրաժեշտօրէն: Ունէինք մէկը Պրն. Լեւոն Մըսրըլեանը որ դժբաղաբար ուրիշ քաղաք հաստատուեցաւ:

Ասկէ ելեք ամիսներ առաջ, մեր Գերիքիւզի Դպրապետը որ Գումգարուի Մայր եկեղեցւոյ Դպրապետ ալ եղած է, նամակ գրած էր Պրն. Պըրթին որպէսզի էֆիտէ-վիտ օճ Սըփօրթ մը ղրկէ եւ թէ Պրն. Վահէ Զնտանճեանը արդէն առած է եղեր իր ամերիկայ գալու վիզան եւ թէ ժամանակին Մամբրէ Սրբազանն ալ դիմած է եղեր Ամերիկեան Կառավարութեան որպէս այդ օրերու Առաջնորդը, եւ թէ ինք, Պրն. Վահէ Զնտանճեանը դրամական նեղութիւն մը չունի, այլ պարզապէս հոս գալէն վերջ իրեն գործ մը գտնելու բարոյեական օգնութիւնը կը խնդրէր եւսլին եւսլին,

Հոգաբարձութիւնս իր վերջին նիստին մէջ որոշեց գրել ԶԶրդ սրբազանութեան, խնդրելով որ Առաջնորդարանը օրէնքի սահմաններու մէջ սպահովէ Մայամիի եկեղեցիին համար Վահէ Զնտանճեանը որպէս Դպրապետ:

Ես անձնական նամակ մըն ալ գրեցի Պոլիս եւ կը սպասեմ Պրն. Զնտանճեանի պատասխանին, իր նոր կացութեան մասին տեղեկութիւն մը տալ:

Հոգաբարձութիւնս որոշեց փոքրիկ ամսական մըն ալ տալ իրեն եւ անշուշտ երբ եւ ինչ հասնի Մայամի, այստեղ գտնուին պիտի հայեր որոնք օգնեն իրեն որ գործ մըն ալ գտնէ եւ իր ապրուստը հանէ:

Եթէ Պրն. որպէս Առաջնորդ կը խորհի թէ կանոնի եւ Օրէնքի համաձայն կրնաք Դպրապետի պահանջը ներկայացնել Գաղթայի Սպասարկութեան մենք շնորհակալ եւ երախտապարտ մնանք պիտի Ձեզի, այս բարիքին համար, մեզի Դպրապետ մը հայրախօս ըլլալնուդ համար:

Սիրով եւ յարգանք

Աղօթակից Ձեր

VAHE ZINDANDJIAN  
POYRAZ SOKAK №18  
HARBIYE, ISTANBUL  
TURKEY

Քի. 19154  
Հոկտեմբեր 18, 1967

Հոգեչեղ  
Ս. Իսահակ Ս. Վրզ. Դազարյան  
Հոգեւոր Հովիտ Ս. Յովհաննէս Մկրտիչ Մկեղծեցու  
Մայմի:

Սիրելի խոր Իսահակ,

Առաջած ձեր 25 Անդամները 1967 թուականի Ձեր նամակը:

Ռեմիկան Խորհուրդի Հոկտեմբեր 8, 1967 Նիստին #12 վերանկատեցին Ձեր հրատարականք եւ իմաստութիւն Կանգնեցին ընթացքում Ձեր խնդրանքին եւ ընդունին Ձեր հրատարականք Մայմիի Ս. Յովհաննէս Մկրտիչ Լա-յաստանեայց Մկեղծեցու, Հովիտի Ձեր պաշտօնին:

Այսու եր յայտնենք Ձեզ որ արեւմտեան Հովիտի Ձեր պաշտանքը շարունակել ժրնջել հոկտեմբեր 6, 1967, որ ին թուականը նկատելով Հովհաննէս պաշտանի պազարման թուական:

Ռեմիկան Խորհուրդի եւ Ձեր վերահասութիւնն ու գահանակութիւնը կը յայտնենք Ձեզի որ վերջին յարաւարները: ընթացքին կարգապահ Ձեր նախնայ պշտատանքով ու ծառայութեանը ստաբիլ Մայմիի Ս. Յովհաննէս Մկրտիչ Մկեղծեցու պայծառութեան եւ Լամայնքի մեր ժողովուրդի Հոգեւոր շինութեան:

Կը ժաղթենք Ձեզի Աստուծոյ օգնականութիւնը եւ յաջողութիւն:

Սիրոյ օգնականի

ԹՈՐՆԱՆ ՆՈՅՍԿՐԳՈՍ  
Առջնորդ

Թիւ 19154  
Հոկտեմբեր 18, 1967

Հոգեշնորհ  
Տ. Իսահակ Մ. Վրզ. Ղազարեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Մայմի:

Սիրելի Հայր Իսահակ,

Առաջած ենք 25 Սեպտեմբեր 1967 Թուակիր Ձեր նամակը:

Թեմական Խորհուրդի Հոկտեմբեր 3, 1967 նիստին մէջ վերանկատեցինք  
Ձեր հրատարականը եւ իմաստութիւն համարեցինք ընթացք տալ Ձեր խնդրան-  
քին եւ ընդունիլ Ձեր հրատարականը Մայմիի Ս. Յովհաննէս Մկրտիչ Հա-  
յաստաննայց Եկեղեցւոյ Հովիւի Ձեր պաշտօնէն:

Այսու կը յայտնենք Ձեզ որ բարեհաճիք Հովիւի Ձեր պաշտօնը շարու-  
նակել մինչեւ Դեկտեմբեր 4, 1967, եւ յետ Թուականը նկատելով Հովուական  
պաշտօնէ դադարման Թուական:

Թեմական Խորհուրդի եւ մեր գնահատութիւնն ու զոհուանակութիւնը կը  
յայտնենք Ձեզի որ վերջին չորս տարիներու ընթացքին կարողացաք Ձեր  
նուիրեալ աշխատանքով ու ծառայութեամբ սատարել Մայմիի Ս. Յովհաննէս  
Մկրտիչ Եկեղեցւոյ պայծառութեան եւ համայնքի մեր ժողովուրդի Հոգեւոր  
շինութեան:

Կը մաղթենք Ձեզի Աստուծոյ օգնականութիւնը եւ յաջողութիւն:

Սիրոյ ոգշուելու

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ



Թիւ 19155  
Հոկտեմբեր 19, 1967

Մեծայարգ  
Տիար Ճէթ Թակոբեան  
Ատենապետ Միսկան Խորհուրդի  
Ս. Թովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Մայամի.

Սիրելի Պրն. Թակոբեան,

Թեմական Խորհուրդի Հոկտեմբեր 3, 1967 նիստին մէջ վերանկատեցինք Ս. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Հոգեշնորհ Տ. Իսահակ Մ. Վրդ. Ղազարեանի ներկայացուցած 7 Օգոստոս 1967 թուակիր հրատարականը, եւ որոշեցինք ընթացք տալ Հայր Առաքի խնդրոսին եւ ընդունիլ իր հրատարականը Մայամիի Ս. Թովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Հովիւի իր պաշտօնէն:

Պաշտօնագրով մը հաղորդած ենք Հոգեշնորհ Տ. Իսահակ Մ. Վրդ. Ղազարեանին որ քարհանի շարունակել Հովիւի իր պաշտօնը մինչեւ Դեկտեմբեր 4, 1967, սոյն թուականը նկատելով հովուական իր պաշտօնէն դադարման թուական:

Թեմական Խորհուրդի Թելադրութիւնն է որ Միսկան Խորհուրդը Հայր Իսահակի թոշակը վճարէ մինչեւ Դեկտեմբեր 31, 1967, եւ հովուական պաշտօնէ իր դադարման առիթով ինչ որ պատշաճ է կատարէք:

Մայամիի Ս. Թովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ հովուութեան համար պիտի շանանք յարմարագոյն կարգադրութիւն ընել եւ հաղորդել Ձեզ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

**Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ**

Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հովի

Գեր. Տ. ԻՍԱՀԱԿ Ե. ՎՐԴ. ՂԱԶԱՐԻԱՆ

Հեռախոս 371-4484



**ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami**

Rector

**Rt. Rev. Issahag Dz. V. Ghazarian**

**Tel. 371-4484**

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

25 Սեպտեմբեր 1967

Գերաշնորհ  
Տ.Թորգոմ Եպիսկ.Սանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եօրթ

Սիրելի սրբազան,

Ստացած ենք 20 Սեպտեմբեր 1967 թուակիր Ձեր Թեմայան Խորհուրդին ուղղվածը ըստ որուն « Եթէ մենք անհրաժեշտ նկատենք, Թեմական Խորհուրդը տրամադիր է իր անդամներէն ներկայացուցիչներ դրկել քննութեան ենթարկելու հրաժարականիս կապակցութեամբ յարուցուելիք հարցերը, »:

Այսու կը հաղորդենք Ձեզ թէ մենք անհրաժեշտ կը նկատենք Թեմական Խորհուրդիդ ներկայացուցիչներուն ներկայութիւնը Մայամի:

Հաճեցէք մեզ տեղեկացնել ներկայացուցիչներուն Մայամի ժամանման թուականը:

Եղբայրական սիրով  
*Issahag Dz. V. Ghazarian*  
ԻՍԱՀԱԿ Ե. ՎՐԴ. ՂԱԶԱՐԻԱՆ  
Հովի Հայոց Մայամիի